

Տեղեկագիր

Թիվ 5 (41)
Մայիս 2009թ.

Newsletter

Issue 5 (41)
May 2009

Ծովի մակարդակից ցածրից մինչև բարձրադիր գոտի

Ֆրիերկ Բրուինսմա
Փոխանակման ծրագրի ուսանող,
ՀԱՍ Դեն Բոշ համալսարան, Նիդերլանդներ



Իմ անունը Ֆրիերկ Բրուինսմա է: Ես Նիդերլանդների ՀԱՍ Դեն Բոշ կիրառական գիտությունների համալսարանի բուսաբուծության և լանդշաֆտի կառավարման ավագ կուրսի ուսանող եմ: Ինձ հնարավորություն ընձեռվեց կրթական փոխանակումների եվրոպական էրասմուս Մունդուս ծրագրի կողմից կրթաթոշակ ստանալու միջոցով գալ

Հայաստան և մեկ կիսամյակ սովորել Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնում: Ես առհասարակ համալսարանն ավարտելուց հետո ճանապարհորդելու ցանկություն ունեի: Հենց ավարտական նախագիծս իրականացնելու ընթացքում էլ պատահաբար էլեկտրոնային նամակ ստացա, որով հայտնվում էր Հայաստանում ուսանելու այս հնարավորության մասին: Այսպես ես եկա Հայաստան: Վերոնշյալ կրթաթոշակով ԱՌԿ-ում եմ սովորում նաև ուսանողներ Պորտուգալիայից և Հունաստանից:

Մինչ Հայաստան գալստեանս միայն որոշ չափով ծանոթ էի հայերի պատմությանը և երկրի աշխարհագրական դիրքին և իրականում չգիտեի, թե ինչ կարելի է ակնկալել այստեղից: Դրա համար էլ սկսեցի լրջորեն նախապատրաստվել ճամփորդության: Իմ այդ լուրջ, եթե չասեն՝ զգուշավոր, նախապատրաստությունը կարող է հետաքրքիր փորձ լինել ուրիշների համար: Ես վերցրեցի իմ բոլոր տաք շորերը, քանի որ Հոլանդիայի արտաքին բյուրոյից տեղեկացա, որ Հայաստանում մինչև մայիսի վերջ -10 աստիճան ցուրտ է գրանցվում: Այնուհետև զգուշացրեցին, որ տարբեր տեսակի բազմաթիվ հիվանդություններ են տարածված, ու բնականաբար ես բոլոր հնարավոր դեղամիջոցները վերցրեցի հետս... Հայաստան գալուց կարճ ժամանակ անց հասկացա, որ այդ ամենը իրականության հետ որևիցե կապ չունի:

Դժվար չէ կռահել, որ Հայաստանի մասին իմ այսօրվա պատկերացումը, մեղմ ասած, տարբերվում է այս փոքրիկ ու գեղեցիկ երկրի մասին իմ ունեցած նախնական տեղեկություններից: Պարզվեց, որ ոչ միայն եղանակը, այլև, որ առավել կարևոր է, մարդիկ այստեղ շատ ջերմ են ու բարեկամաբար տրամադրված: Հայերը միշտ ցանկանում են օգնել բոլորին, ովքեր այդ օգնության կարիքը կարող են ունենալ:

Հայաստանը անցումային տնտեսությամբ երկիր է՝

From Below Sea Level to High Altitude

By Freerk Bruinsma
ATC Exchange Student, HAS Den Bosch
University, the Netherlands

My name is Freerk Bruinsma and I'm a senior Garden- and Landscape Management student on HAS Den Bosch University of Applied Science in The Netherlands. I've been given the opportunity to receive a scholarship through the European Erasmus Mundus exchange program and come to study at the Agribusiness Teaching Center of the Armenian State Agrarian University in Armenia. This opportunity appeared to me during my graduation project. After graduation it was my intention to travel, and by incident I received an email saying about this opportunity to study in Armenia. So I am here now. In addition, there are two more exchange students at the ATC, one from Portugal and the other from Greece, who came here through the same scholarship.

Prior to coming to Armenia, all I knew about Armenia was the location and some facts of Armenia's history. Thus I did not know what to expect. I think the way how I was preparing my trip to Armenia will be useful for others. I was really careful, if not cautious: first, the Dutch Foreign Bureau told me it is minus ten degrees by Celsius in Armenia up until end of May, so I packed all my warm clothes. Next they told me there are a lot of deceases, so I took every vaccine that they had... After the first couple of weeks in Armenia I realized that what I was told is far from the reality.



You can tell now that my today's view of Armenia does not compare with the one I had before coming to this nice little country. Not only the weather, but, most importantly, the people of Armenia, are warm and friendly. They are always willing to help

ընդհանուր և որոշ անհատական դժվարությունների դրսևորումներով: Սակայն եթե անդրադառնանք կրթությանը, համեմայնդեալս այստեղ՝ ԱՌԿ-ում հայ և վրացի ուսանողների ստացած կրթությանը, ապա դրա որակը կարելի է համեմատել իմ երկրի կրթության որակի հետ. տարբերությունը ուսանողների մտածելակերպի մեջ է, որը այստեղի ուսանողների դեպքում շատ ավելի լավն է, քան հոլանդացիների: Այստեղ դասերից հետո ուսանողները՝ թե հայերը և թե վրացիները, միշտ իրար հետ քննարկում են խնդիրները և լուծում առաջադրանքները, ավագ կուրսի ուսանողներն օգնում են կրտսերներին: Մինչդեռ Յուլանդիայում ուսանողները դասերից հետո պարզապես անհետանում են և գործնականում չեն շփվում միմյանց հետ: Մենք այնտեղ բոլոր աշխատանքները կատարում ենք ինտերնետի միջոցով, դրա համար էլ ուսանողների միջև կապ, շփում չկա:

Հայաստանի մասին շատ բան կա պատմելու, բայց, իմ կարծիքով, ամեն մարդ ինքը պետք է անցնի այս ամենի միջով: Իսկ դրա համար զերազանց հնարավորություն են ընձեռում արտերկրում ուսանելու ծրագրերը:

anybody who may need their help.

Armenia is a country in economic transition with many of the common and some individual challenges still to overcome. However, if you look at the quality of education, at least the one that Armenian and Georgian students get here at the ATC, it can be compared with the quality of education that we get at home, in the Netherlands. If we go on with comparisons, I would love to mention that mentality of students here is much better than in my country. A good illustration of this is that after lessons the students, Armenians and Georgian alike, stay and discuss problems and find solutions to the problems/assignments together. Seniors are helping juniors as much as they can. In the Netherlands, everybody disappears once the classes are over. All work is done through internet, and there is no real communication and bonding between fellow students.

There is so much more to tell about this county and my study and life here, but I think people have to experience the benefits of studying abroad by themselves.



Ընդունելության քննություններ ԱՌԿ-ում



Entrance Exam at ATC

Ազրբեյգանի ուսուցման կենտրոնում մայիս ամսին տեղի ունեցան ընդունելության քննություններ, նախ՝ գրավոր թեստ տնտեսագիտություն, մաթեմատիկա և անգլերեն առարկաներից, այնուհետև՝ հարցազրույց: Քննությունների արդյունքներով ընտրվեցին 33 լավագույնները, ովքեր կմասնակցեն հունիսի 15-ից մեկնարկող ամառային նախապատրաստական դասընթացներին: Այս խմբում նույնպես, ավանդաբար, աղջիկների թիվն ավելի մեծ է, քան տղաներինը: Ամառային դասընթացների ժամանակ այս խմբին կմիանան մի քանի վրացի ուսանողներ:

Admission tests on Economics, Math, and English, followed by oral interviews, revealed the 33 best students in mid May who entered the ATC Summer Preparatory Course. Traditionally, there are more girls than boys in this group either.

The Summer Course will start on June 15 and will last two months. A few Georgian students will join this group on June 15.

It is well known that students come to the ATC after they complete their second year at the Armenian State Agrarian University, Georgian State Agricultural University or any other economic university. The interesting tendency that this year's admission indicated is that many of the applicants have completed their third year. They said they would prefer to 'loose' one year but end up as ATC students. Another tendency this year was that the number of the applicants with other than agribusiness and marketing background is much higher than in previous years. ○

Հայտնի է, որ ուսանողները ԱՌԿ են գալիս Հայաստանի պետական ագրարային համալսարանի, Վրաստանի պետական գյուղատնտեսական համալսարանի կամ տնտեսագիտական ուղղվածության որևէ այլ բուհի երկրորդ կուրսն ավարտելուց հետո: Հետաքրքրական է, որ այս տարի անհամեմատ մեծ է երրորդկուրսեցի դիմորդների թիվը: Հարցազրույցի ժամանակ նրանք ասում էին, որ ավելի լավ է կորցնել մեկ տարի, բայց ի վերջո դառնալ ԱՌԿ-ի ուսանող: Մեկ այլ միտում էլ նկատվեց. այս տարի ավելի մեծ էր նաև ոչ ազրբեյգանցի և շուկայաբանություն մասնագիտությամբ

դիմորդների թիվը: ԱՌԿ-ում սովորելու համար այս ուսանողները հանձնելու են տարբերություններ, որպեսզի համարվեն ԱՇ մասնագիտության երկրորդ կուրսն ավարտած:



ԱՌԿ-ի վեց շրջանավարտներ Կոկա Կոլայում



Լիդիա Բարոյան
ԱՌԿ-ի 2006թ. շրջանավարտ

ԱՌԿ-ի հիմնական առավելություններից մեկն այն է, որ այն աջակցում և հնարավորություն է տալիս իր շրջանավարտներին աշխատանքի անցնել մի շարք հայտնի և ճանաչված կազմակերպություններում Հայաստանում և արտերկրում:

ԱՌԿ-ի տեղեկագրում տպագրված իմ վերջին հոդվածում (թիվ 1, 2007թ.) ես նշել էի, որ աշխատում եմ Էյչ-թու Էքոնոմի ՓԲԸ-ում (Գաֆէսճեան ընտանիք հիմնադրամ): Այս աշխատատեղի մասին տեղեկացել էի ԱՅԿԱԿ Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության կենտրոնից: Այժմ աշխատում եմ Կոկա Կոլա Հելենիկ բրթլինգ քոմփնի Արմենիա ընկերությունում: Ինձանից բացի այստեղ աշխատում են նաև ԱՌԿ-ի շրջանավարտներ Լևոն Այվազյանը, Հասմիկ Գևորգյանը, Դավիթ Սիրունյանը, Մարիա Պողոսյանը և Ժաննա



Գրիգորյանը: Նրանք բոլորը տարբեր բաժիններում են աշխատում, որն ապացուցում է, որ ԱՌԿ-ն իր ուսանողներին խորը գիտելիքներ է տալիս տնտեսության տարբեր ճյուղերում աշխատելու համար:

Այժմ հակիրճ նկարագրեն ԱՌԿ-ի շրջանավարտների հիմնական պարտականությունները Կոկա Կոլա ՀԲԲԸ-ում:

Հասմիկ Գևորգյանն աշխատանքի է ընդունվել 2006 թ., երբ ԱՌԿ-ի վերջին կուրսի ուսանողուհի էր: Նա ապառաչվեց վաճառքի և երթուղու հաշվառման օպերատոր էր: 2007 թ. Հասմիկը ճանաչվել է ֆինանսական բաժնի լավագույն աշխատակից և ստացել հաշվապահի պաշտոն: Նա կատարում է վճարումների տվյալների գրանցում, հսկում է ոչ ընթացիկ ակտիվները և հունքի ծախսերը, հաշվում է ամսական հասույթը:

2006 թ-ից Դավիթ Սիրունյանն աշխատում է որպես մատակարարման և մաքսատան մասնագետ: Նա հիմնականում զբաղված է մաքսագերծմամբ, ինչպես նաև՝ մարկետինգի բաժնից տպագրության պատվերներ ընդունելով:

Սկզբնական շրջանում Լևոն Այվազյանն աշխատում էր մարկետինգի բաժնում որպես 6-ամսյա վերապատրաստման ծրագրի պրակտիկանտ: Հետո 1 ամսով աշխատանքի է ընդունվել ֆինանսների բաժնում, իսկ այժմ աշխատում է վաճառքի բաժնում:

Ժաննա Գրիգորյանը ԱՌԿ-ի 2007 թ. ուսումնարտադրական պրակտիկան անցկացրել է Կոկա Կոլա ՀԲԲԸ-ում և ներկայումս աշխատում է վաճառքի բաժնում:

Այժմ Ժաննան և Լևոնը ակտիվների հսկման օպերատորներ են և տվյալներ են մուտքագրում ընկերության համակարգի մեջ, երթուղիներ են կազմակերպում, սառնարանային սարքեր են տեղադրում Երևանում և մարզերում, պատրաստում են շաբաթվա հաշվետվությունները, հսկում սառնարանների

Six of ATC Graduates Work for Coca Cola

By Lidia Baroyan
ATC graduate of 2006

One of the essential advantages that Agribusiness Teaching Center offers to its' graduates is the chance and support to be employed in many famous and well known organizations in Armenia as well as abroad.

In my last article published in the ATC newsletter (Issue #1, 2007) I mentioned that I was employed at H2 ECoNomy CJSC (Cafesjyan Family Foundation) which was the result of the ICARE Career Placement and Counseling Center's support. Currently I am working with Coca Cola Hellenic Bottling Company Armenia. There are also 5 ATC graduates working together with me in Coca Cola CJSC - Levon Aivazyan, Hasmik Gevorgyan, Davit Sirunyan, Maria Poghosyan, and Zhanna Grigoryan. They all work in different departments, which shows that the ATC is able to give us profound knowledge in various sectors of economy.

I would like to briefly represent the main responsibilities of the ATC graduates in Coca Cola CJSC.

Hasmik Gevorgyan was hired as a route settlement operator in 2006 when she was at her last year of study at the ATC. In 2007 she was recognized as the best employee of financial department, and then she was transferred as an accountant. She is mainly engaged in the import on payments for credit, control of the fixed assets and material expenses, as well as estimation of the monthly revenue.

Davit Sirunyan has been working as a Procurements and Customs Specialist since 2006 and is mainly engaged in the customs clearance for the company as well as takes printing orders from the marketing department.

Levon Aivazyan was initially selected as an intern to participate in a 6-month graduate trainee program in the marketing department, then he was hired to work in finance department for a month, and now he is in the sales department.



Zhanna Grigoryan passed the ATC internship in Coca Cola CJSC in 2007. During her last year of study at the ATC she was employed at Sales CDE department.

Currently Levon Aivazyan and Zhanna Grigoryan are Asset Tracking operators and are responsible for the data entry to the company's system, organizing routes (cooler placement in Yerevan as well as in regions), preparing weekly reports, control-

քանակին պահեստներում և այլն:

Մարիա Պողոսյանը վաճառքի օպերատոր է: Նա գործակցում է շուկայի զարգացման մասնագետների հետ, ընդունում է կանխիկ և ապառիկ վաճառքի պատվերները, կազմում է վաճառքի օրական սխեմաները և տվյալները ներկայացնում է խմբի ղեկավարներին և նախնական վաճառքի մասնագետներին:

Ես 2008 թ. սեպտեմբերից աշխատում եմ ֆինանսների բաժնում, նախ՝ որպես երթուղու հաշվառման օպերատոր, այնուհետև՝ որպես ապառիկ վաճառքի վերահսկման օպերատոր: Ես երթուղիների օրական տվյալներն եմ մուտքագրում, կազմում եմ օրվա ապառիկ վաճառքի հաշվետվությունները, հետևում եմ ապառիկի ժամկետներին և ստուգում ուշացած վճարումները, զեղչերը և անվճար բաժանումը:

ling cooler balance in warehouse, etc.

Maria Poghosyan is working in Coca Cola HBCA as a sales operator. Her main working responsibilities include contacting with market developers, taking cash and credit sales orders, making daily sales charts and report the results to the presellers and team leaders.

I have been working with Coca Cola HBCA CJSC since September 2008 in Finance Department, first as a route settlement operator, then as a credit control operator. My main responsibilities include inputting data of daily route invoices, preparing daily credit sales' reports, managing the outstanding sales balances, monitoring credit limits and overdue sales, verifying and managing the discounts and free of charge sales, etc.

Աշխատաժողովներ Բոլոնիայի գործընթացի և ՀՊԱՀ ԳԲԿԲ ծրագրի շրջանակներում

Գայանե Աթոյան, Անի Տեր-Մկրտչյան
Գյուղ. կրթ. բարեփոխումների ծրագիր

ՀՊԱՀ-ում իրականացվող գյուղատնտեսական բարձրագույն կրթության բարեփոխումների ծրագրի շրջանակում 2009թ. ապրիլի վերջին և մայիսի սկզբին համալսարանում էին գտնվում ԱՄՆ Ջորջիայի համալսարանի պրոֆեսորներ Ղեյվիլը Կնաուֆը և Ջեյսոն Պիկը: Նրանք աշխատաժողովներ անցկացրեցին ՀՊԱՀ դասախոսների համար՝ կրթական որակի ապահովմանն առնչվող թեմաներով: Դոկտ. Կնաուֆը և դոկտ. Պիկը հանդիպումներ ունեցան ՀՊԱՀ ղեկավարների և դասախոսների հետ և այցն օգտագործեցին կրթության որակի համակարգի վերաբերյալ իրենց գիտելիքները, փորձը և դիտարկումները փոխանցելու, ինչպես նաև ՀՊԱՀ-ում դրա ներդրման ու կիրառման վերաբերյալ:

Ամերիկյան փորձագետները ուսումնաստվական ամբողջ մյուսը բաժանել էին երկու փուլի, ընդամենն առաջին փուլը նախատեսված էր ղեկավարների ու ամբիոնի վարիչների համար, իսկ երկրորդը՝ նախորդ ուսուցումներին աչքի ընկած առաջադեմ դասախոսների համար: Առաջադեմ դասախոսների ևս մեկ խումբը հրավիրվեց Ծաղկաձոր՝ մասնակցելու նշյալ երկու ուսուցողական աշխատաժողովների ծրագրերով ուսուցմանը:

Բուն աշխատաժողովը և դրա շրջանակում անցկացված հանդիպումները հաջողությամբ պսակվեցին, քանի որ ակտիվ քննարկումներն ու փոխադարձաբար օգտակար տեղեկատվության փոխանակումը, ըստ հանդիպման մասնակիցներից շատերի, կարևոր նշանող հանդիսացան հենց իրենց անձնական զարգացման առումով: Նրանցից ոմանք նշեցին, որ իրենք այժմ առավել տրամադրված ու պատրաստ են առհասարակ Բոլոնիայի գործընթացով նախատեսված կրթական բարեփոխումների առաջիկա մարտահրավերներին, և մասնավորապես՝ Գյուղատնտեսական բարձրագույն կրթության բարեփոխումների ծրագրի հետագա մարտահրավերներին, որն այսօր իրականացվում է ՀՊԱՀ-ում: Սա ուսուցողական ծրագրի թերևս ամենակարևոր արդյունքն է: Կարող ենք փաստել, որ դոկտ. Կնաուֆի և դոկտ. Պիկի ջանքերը հաջողությամբ պսակվեցին, առավել ևս՝ ԱՀԿՄԿ/ԱՈՒԿ-ի տնօրեն Վարդան Ուռուտյանի կազմակերպչական գերազանց աշխատանքի և ՏԵՄՊՈՒՍ-ի հայաստանյան մասնաճյուղի փորձագետների մասնագիտական խորհրդատվության պայմաններում: Բոլոր մասնակիցները, անկախ իրենց մասնակցության և հետաքրքրվածության աստիճանից, բարձր գնահատեցին դոկտ. Ուռուտյանի աշխատանքը:

Առաջիկայում տեղի կունենա աշխատաժողովների մեկ

Workshops Within the Bologna Process and Education Reform Project at ASAU

By Gayane Atoyan and Ani Ter-Mkrtchyan
Ag Education Reform Project

David Knauff and Jason Peak, University of Georgia, were in the Armenian State Agrarian University in late April-early May 2009 to conduct workshops for the ASAU faculty within the Agricultural Education Reform project. The topics were mainly focused on ensuring the quality of education. Dr. Knauff and Dr. Peak met with the deans and progressive faculty of ASAU and used their opportunity to transfer their knowledge, experience, as well as their observations on the system of education quality and implementation thereof at ASAU.



The U.S. experts divided the entire training course into two phases, with the first phase targeting only deans and heads of chairs and the second one focusing on progressive faculty from the previous trainings. Another progressive faculty group was invited to the resort town of Tsaghkadzor to participate in a joint training workshop combining both programs.

The workshop itself and the meetings within it were very successful since active discussions and exchange of useful information took place in a way that many of the participants consider this workshop as an important landmark in their personal growth. Some of them mentioned that they are now in a position to better meet upcoming challenges in the overall Bologna Process and in particular the Higher Agricultural Reform Project underway at ASAU. This is perhaps the most critical outcome of the training program. This was a successful effort by Dr. Knauff and Dr. Peak, an effort that was added by excellent organizational efforts by the ICARE Director Vardan Urutyanyan and professional

այլ շարք, որն ուղղված կլինի, մասնավորապես, եվրոպական Էրասմուս Մունդուս կրթական փոխանակումների ծրագրին. այս թեման ընդհատվել էր Երևանում անցկացված աշխատա- ժողովների ժամանակ: Թեման կներկայացնի ՏԵՄՊՈՒՍ-ի Հայաստանի ազգային գրասենյակի ղեկավար Լանա Կարլովան:

Այսպիսով, ԱՀԿԿ հիմնադրամի Գյուղատնտեսական բարձրագույն կրթության բարեփոխումների ծրագրի շրջա- նակում մենք ակնկալում ենք նոր և նույնքան արդյունավետ աշխատաժողովներ ՀՊԱՀ դասախոսների համար:



advice from Bologna Process and TEMPUS experts in Armenia. All participants, regardless of their degree of participation and interest, appreciated Dr. Urutyany for these efforts.



Another series of workshops will be held in future to address, in particular, European Erasmus Mundus education exchange program – by the way – a topic left over from a previous workshop in Yerevan; Lana Karlova, Coordinator of the Armenian office of TEMPUS, will present the topic.

Thus, we are expecting more and as effective workshops for ASAU faculty within ICARE's Ag Education Reform program.

Էկոնոմետրիկայի դասընթաց համակարգչային սրահում

Training Course in Econometrics for Young Specialists



Graduate School of Corporate Management (GSCM) held a training course from May 12 through May 22 at the ICARE Computer lab. Vahram Ghushchyan, an ATC Instructor and a GSCM Expert, conducted the training for young professionals from the Central Bank of Armenia, Inecobank and the GSCM. The program included: Data Management; Indicator Statistics; Simple Regression Analysis; Interval Estimations and Hypothesis Testing; Estimation of Multiple Regression Equations; Estimation of Nonlinear Correlations; and Diagnostics of Regression Models. During the training, the participants used the STATA software package for analyzing a number of statistic data. The participants received GSCM certificates of completion.

Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցը (ԿԿԲԴ) մայիսի 12-22-ը վերապատրաստման դասընթացներ էր կազմակերպել ICARE հիմնադրամի համակարգչային լսարանում: ԱՌԻԿ-ի դասախոս և ԿԿԲԴ-ի փորձագետ Վահրամ Ղուշչյանը այս վերապատրաստումը անցկացնում էր ՀՀ Կենտրոնական բանկի, Ինեկո-բանկի և ԿԿԲԴ-ի երիտասարդ մասնագետների համար: Ծրագիրը ներառում էր տվյալների կառավարում, ցուցանիշների վիճակագրություն, պարզ ռեգրեսիայի վերլուծություններ, միջակայքային կանխատեսում և վարկանիշերի ստուգում, բազմակի ռեգրեսիոն հավասարումներ, ոչ գծային կորելացիաների գնահատում և ռեգրեսիոն մոդելների ախտորոշում: Վիճակագրական տվյալները վերլուծելու համար մասնակիցներն օգտագործում էին STATA համակարգչային ծրագրակազմը: Ծրագրի ավարտին մասնակիցները ստացան ԿԿԲԴ-ի վկայականներ:



Supported by:



International Center for Agribusiness Research and Education
74 Teryan St., 0009 Yerevan, Armenia
Tel: (37410) 52-28-39, 56-96-70;
Fax: (37410) 56-62-21 E-mail: info@icare.am
www.icare.am/atc

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն . Երևան, Տերյան 74

